15119

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

«27» 12 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0232-21

Ձեռնարկողը՝ *«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ*
ՀՀ, ք. Երևան, Մ.Բաղրամյան 1 փկղ, 14շ, բն. 12

Գործունեությունը՝ ***Արագածոտնի մարզի «Արագածոտն-8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
ՀՀ, Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0232-21
<27> 12 2021թ.

Արագածոտնի մարզի «Արագածոտն-8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախագծային փաստաթղթեր, ՇՄԱՌԳ հաշվետվություն
Գտնվելու վայրը՝	ՀՀ, Արագածոտնի մարզ

Ներածական մաս. «Արագածոտն-8» տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (այսուհետ՝ ՄՄՀՏՊՓ) նախագծերը ներառում են Ակունք, Գառնահովիտ, Զովասար, Ծաղկասար, Կարմրաշեն, Մաստարա, Ոսկեթաս (ընդամենը 7) գյուղական համայնքները:

Արագածոտնի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծի «Շրջակա միջավայրի բարելավման ու պահպանման միջոցառումներ» բաժինը մշակված է ՄՄՀՏՊՓ համապատասխան, հաշվի առնելով նշված համայնքների 2017-2025թթ. զարգացման ծրագրերը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն) ներկայացված ՄՄՀՏՊՓ նախագիծը՝ /ՇՄԱՌԳ հաշվետվությամբ/ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է հիմնադրութային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. Արագածոտնի մարզի տարածաշրջանի ՄՄՏՀՆ նախագիծը իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որտեղ արտացոլված են բնական պաշարների (օդ, ջուր,հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության արդյունքները՝ տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների, կաթսայատների ճիշտ տեղադրման անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ, կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Արագածոտնի մարզի վերը նշված համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք նպաստելու են տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, լուծվելու են տարածքի

հատակագծային կառուցվածքի մշակման գործընթացում: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրված է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական, տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

Արագածոտնի մարզի «Արագածոտն-8» -ի տարածաշրջանի հողածածկույթում և ջրային ավազանում կենսաբազմազանության, կենդանական, բուսական աշխարհի և անհետացող տեսակների, հատուկ պահպանվող տարածքների առկայության, սահմանների մասին տեղեկությունները վերցված են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության աղբյուրներից:

«Արագածոտն-8» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում սանիտարապաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման (разрыв) չափերը ընդունված են համաձայն СН245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմաների»: Հաշվի է առնված նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հիգիենիկ և համաճարակային բաժնի համաձայնությունը:

Էլեկտրաենթակայանների ՍՊԳ-ի չափերը ընդունված է դրանց տիպից, տրվող լարումից, տրանսֆորմատորի հզորությունից և քանակից ելնելով, համաձայն ՍՆ և Կ II-12-77 «Պահպանություն աղմուկից» և ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից նորմերի և կանոնների, ԳՈՍՏ «Ուժային, յուղային տրանսֆորմատորներ, թույլատրելի աղմուկի նորմաներ և աղմկային փորձարկումների մեթոդներ»: ՍՊԳ--ների չափը ընդունված է 20 մ:

«Արագածոտն-8» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծը ընդգրկում է 16320,67 հա տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 5667 մարդ: Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ:

Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ ձկնաբուծությունը, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակումը, հողագործությունը և առևտուրը:

«Արագածոտն-8» տարածաշրջանը ներառում է 16320,67 հա հողեր, այդ թվում՝

- գյուղատնտեսական հողեր – 14923,55 հա
- բնակավայրեր – 819,78 հա
- արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության – 74,88 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի – 37,66 հա
- հատուկ պահպանվող տարածքներ – 117,22 հա
- հատուկ նշանակության – 0 հա
- անտառային – 310,48 հա
- ջրային – 37,1 հա
- պահուստային – 0 հա:

Բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 819,78 հա մակերես: Համայնքներում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը՝ 7 է:

Հաճախակի են աղբի կուտակումները հենց բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը:

Օրգանական ծագման թափոնները առաջանում են առողջապահության բնագավառի հաստատություններում:

Թափոնները դասակարգվում են հետևյալ կերպ՝

Ա) Ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների ≈90%-ը: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, ստվարաթուղթ, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան քանակը կազմում է 0,2տ: Այս թափոնները հեռացվում են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հիգիենիկ և համաճարակային բաժնի կողմից հատկացված աղբավայր: Դասվում են վտանգավորության 4-րդ դասին: Ծածկագիրն է՝ 91200400 01 00 4:

Բ) Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է 0. 02 տ/տարի:

Արդյունաբերական թափոնները առաջանում են արդյունաբերական ձեռնարկություններում:

Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 3,8 տ/տարի:

Թափոնները բաժանվում են 2 խմբի՝

- օգտագործման ենթակա;
- ոչ օգտագործելի:

Օգտագործման ենթակա թափոնների շարքին են դասվում՝ օգտագործված յուղերը, թեփերը:

Օգտագործված յուղերը տեղում ենթարկվում են մեխանիկական մաքրման (ռեգեներացիա) զտմամբ և նստեցմամբ: Մաքրված յուղերին ավելացվում են մաքուրը և օգտագործվում:

Առաջացած թեփի թափոնները ենթակա են օգտագործման տնտեսության այլ արտադրանքների պատրաստման համար: Օգտագործման ենթակա թափոններ են առաջանում գյուղ մթերքների վերամշակման ձեռնարկություններում:

Օգտագործման ենթակա թափոնների ընդհանուր քանակը կազմում է 1,8 տ/տարի:

Ոչ օգտագործելի թափոնները գործող ձեռնարկությունների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հիգիենիկ և համաճարակային բաժնի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Ոչ օգտագործված թափոնների քանակը կազմում է 2,0 տ/տարի:

«Արագածոտն-8» -ի տարածաշրջանի համայնքներում տեղակայված է 7 գերեզմանոց ընդհանուր ≈ 12 հա տարածքում: Գերեզմանոցները գործող են:

Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ: Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները:

«Արագածոտն-8» համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները.

- բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում համայնքապետարաններում;
- վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը;
- ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում;

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև գյուղական համայնքների կանաչապատմանը, որպես օդը մաքրող գործոն:

Նախատեսված են այգիներ, սպորտ-հրապարակներ՝ կանաչ գոտիով, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն: Բացի դրանից նախագծված են նաև մագիստրալ ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում:

«Արագածոտն-8» տարածաշրջանի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Այս երևույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքերի համար առաջարկված է հեղեղատար առուների նախագծում և կառուցում:

Հեռանկարում համայնքների մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներ կհանդիսանան արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումները: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Արտադրական արտանետումները հիմնականում առաջանում են բնական գազի այրումից: Ներկայումս համայնքներում ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):

Հեռանկարում նախատեսված է բոլոր ձեռնարկությունների համար 5-10% արտադրողականության աճ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգն ընդգրկում է՝

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- հողային ավազանի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
- ջրային ավազանի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 100.0 հազ. ՀՀ դրամ:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուդարձը ցածր է:

Տրանսպորտային հոսքերի աղմուկը առաջանում է մեքենաների աղմուկից տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից: «Արագածոտն-8» համայնքներում, ամենա մեծ Մաստարա համայնքի ավտոմեքենաների մաքսիմալ ժամային անցուդարձը կկազմի 60 միավոր մեկ ժամում:

Աղմուկի մակարդակը փողոցի բանուկ մասի եզրից 7.5 մետր հեռավորության վրա որոշված է տարբեր փողոցներում: Աղմուկի ամենաբարձր մակարդակը կազմում է 40 դԲԱ, 70 դԲԱ-նորմայի դեպքում:

Ավտոմեքենաների մեկ կարգային հոսքի դեպքում, երթևեկության ինտենսիվությունից կախված աղմուկի միջին մակարդակը կազմում է 35-40 դԲԱ՝ փողոցի բանուկ մասի եզրից 7.5 մ հեռավորության վրա փողոցով երթևեկության առավելագույն – 60 մեքենա/ժամի դեպքում:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ «Արագածոտն-8» տարածաշրջանի բնակավայրերում ձայնի էկվիվալենտ մակարդակը 25 մ հեռավորության վրա ճանապարհից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը կկազմի 30-35 դԲԱ, նորման 45-55 դԲԱ:

Համայնքների զարգացման առաջնային ուղղություններ են դառնում տարածքային զարգացման այն հիմնական ուղղությունները, որոնց մեջ ներդրումները նպաստավոր են այդ ոլորտների կայացման և զարգացման համար: Այդ ուղղությունների ընտրությունը կխթանեն.

- արտադրության գոյություն ունեցող հիմնական ճյուղերի զարգացումը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը,
- շրջակա միջավայրի բարելավումն և պահպանումը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ-կենցաղային համակարգի զարգացումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովումը:
- միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգում, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայում և կազմակերպում,
- բացառել գյուղատնտեսական բարձորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարումը, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձաններին վնաս պատճառումը:
- հիմնական գործառնական գոտիների վերանայում և հստակեցում,
- բոլոր համայնքների գազաֆիկացում,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացում և ընդլայնում,
- աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
- բոլոր գյուղական համայնքների կոյուղացում:
- գյուղական համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում և գործարկում:
- նախատեսել նոր տեխնոլոգիաներ ջեռուցման ժամանակ՝ արևային էներգիա և բիոգազ,
- նախատեսել աղբի տեսակավորում:

Տարածքային պլանավորման նախագծով հողերի նպատակային նշանակության հողատեսքի, գործառական նշանակության և զբաղեցրած տարածքների էական փոփոխություն չի նախատեսվում:

Համապատասխան տարածքային զարգացման հայեցակարգի բնակչության աճը հիմնականում պահպանում է վերջին տարիների տեղի ունեցող միտումները: Որոշ համանքներում, որոնց համար սույն մշակումներից զատ մշակվել են գլխավոր հատակագծեր, նախատեսված է 4.8%-ից մինչև 8%: Հիմնվելով Արագածոտնի տարածաշրջանի տարաբնակեցման համակարգի վերլուծության վրա, նախատեսվում է դիմել բնակավայրերի տարածքային աճի որոշակի սահմանափակումների: Առկա վիճակով գրեթէ բոլոր բնակավայրերի բնակելի տարածքներում առկա են բազմաթիվ տնամերձ հողամասեր առանց կառուցապատման: Գերակշռով թվով գյուղական բնակավայրերի աճի գործակիցը սահմանված է մինչև 1.5%: Տարածաշրջանի բնակչության հաշվարկային թիվը կազմում է 6235 մարդ: Տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են առևտուրը, ձկնաբուծությունը, անասնապահությունը, հողագործությունը, մեղվաբուծությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը:

Համայնքի տարածքի հողերը աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր (խտության գումարային ցուցանիշը՝ ԽԳՑ<16), աղտոտվածության դասը՝ թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար:

Հեռանկարում տարածական պլանավորման նախագծերի իրականացման արդյունքում հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում, քանի որ նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում չի նախատեսված:

ԱՐԱԳԱԾՈՏՆ-8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ /Ձև 3/				
	Տեխնիկատնտեսական ցուցանիշները	Չափման միավոր	Փաստացի	Հեռանկարային
1	ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	հա	16320.67	16320.67
2	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	819.78	827.27
3	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	74.88	74.88
4	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	37.66	38.19
5	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	117.22	117.22
6	ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	-	-
7	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	14923.55	14915.53
8	ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ	հա	310.48	310.48
9	ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	հա	37.1	37.1

Պատճառաբանական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Օրենքով սահմանված կարգով Արագածոտնի մարզպետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել փաստաթղթի վերաբերյալ:

Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- Համայնքի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Արագածոտնի մարզի «Արագածոտն-8» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Վ. Վարդանյան